# ԱՐՏԱՔԻՆ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

## ՄԱՐՈՔԻ ԺՈՂՈՎԸ

### ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԱՆՍՏՈՅԳ

Բարիզէ և Պերլինէ եկած լուրերը համաձայն են սա՛ կէտին վրայ թէ Ֆրանսա և Գերմանիա տակաւին հեռի են համաձայնութենէ ։ Ալժեզիրասի ժողովին շրջանակներուն մէջ երեւ է թէ յուսայ նշոյլները բոլորովին մարած չեն, բայց մօտէն իրազեկ եղող անձնաւորութիւնները տարակոյս չունին որ, եթէ այս ցրտութիւնը շարունակէ տակաւին, արդիւնքը նպաստաւոր պիտի չըլլայ խաղաղութեան ։

Դիտելի է որ Բարիզի թերթերը սկսած են անվեհեր վարմունք մը ցոյց տալ ։ Կոչում կ'ընեն միաբերան իրենց կառավարութեան որպէսզի պինդ մնայ իր ընթացքին մէջ և տեղի չտայ Գերմանիոյ ։ Գերման թերթերուն և բարիզեան թերթերուն միջև պայքարը խիստ է ։ Անգլիական թերթերը ողի ի բուն կը պաշտպանեն Ֆրանսական դատը, և կը յորդորեն Գերմանիան ընդունիլ և իրաւախոհ ըլլալ ֆրանսական առաջարկութեանց վրայ, հակառակ պարագային՝ Գերմանիա չի կրնար թեթեւօրէն պատերազմի ձեռնարկել Ֆրանսայի դէմ, Մարոքի գործին պատճառաւ ։ Արդիւնքը սա՛ միայն կրնայ ըլլալ որ, կ'ըսեն, Գերմանիա պատճառ պիտի ըլլայ մարոքեան խնդրոյն անորոշ կացութեան ։ Այսչափ միայն ։ Անգլիական թերթերը կը հաւատան որ, եթէ Ալժեզիրասի մէջ համաձայնութիւն չգոյանայ, պատուիրակները հոգ պիտի տանին հասկցնելու Գերմանիոյ որ իր այս անյաջողութիւնը պէտք չէ պատճառ մը նկատուի Եւրոպայի խաղաղութեան սպառնալու ։ Շատ որոշ պիտի ըլլայ ժողովին պատուիրակներուն …

Ս. ՊԱՏՐԻԱՐՔ Հօր անձնական քարտուղար և Գասըգիւղի քարոզիչ Տ. Ղեւոնդ վրդ. Դուրեան «Զօրեց աւետարանաց ծագումն և վաւերականութիւնն» անուն գրքոյկ մը պատրաստած ըլլալով, մօտերս հրապարակ պիտի հանէ ։

## ՓԱՐԻԶԻ ՊՈՐՍԱՆ

### BOURSE DE PARIS

19 Փետրվար 1906

| | | | |
|---|---|---|---|
| Ֆրանս. 3% | (3% Français) | 99 | 50 |
| Օսմ. Միացեալ | (R. Nv. Unif.) | 94 | 80 |
| Երկաթուղի | (Lots Turcs) | 145 | 25 |
| Պանք Օթ. | (Banque Ott.) | 639 | — |
| Օսմ. Մաքս. նոր փոխառ. | | 485 | — |
| Պալիա Գարա-Այտըն | | 638 | — |
| Րէժի | (Tab. Turcs) | 411 | — |
| Թրանսվաալ | (Transvaal) | 56 | — |
| Սպանիական | | 94 | 20 |
| Ռուսական 3% | | 69 | 60 |

